Վիկտոր Վարդանյան

# Խաղալիքների արշավը



891.99
Վ-30

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

891.99Մ
Վ-30
2011-07

ՎԻԿՏՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՐՇԱՎԸ

(Մանկապարտեզային կյանքից)

Նկարները Հ. Շավարշի

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

08.08.2013
13024
868
38

Վեր են կացել խոր քնից
Դուրս են յեկել տներից,
Արևի պես ժպտերես
Մանուկներն են յերգում, տես։

Մեղունների պես աշխուժ,
Մանուկները մեր անուշ
Գործարանի լայն բակում
Աղմկում են ու յերգում։



Հենց նույն բակում կա սարքած
Մի սղարան գորշ ներկված
Միշտ սղում են վերից վար
Ու թռչկոտում՝ անդադար։

Այստեղ ավազ, քար ու սել,
Այնտեղ սիրուն կարուսել
Լծած ձիեր, առույգ, ժիր,
Հասի՛ր, նստի՛ր ու քշիր։

Լուցկու փոքրիկ տուփերից
Պատրաստել են տնակներ
Ու գույնզգույն թղթերից
Բազմապիսի նկարներ։

Հոկտեմբերիկ Վինելը,
Հագին յերկար շինելը
Մանուկներին կարգ-կարգի
Կանգնացրել ե մի շարքի։

Հոկտեմբերիկ Փայլակը
Քաշ ե տալիս սայլակը
Սայլակի մեջ լցված լիք
Հազար ու մի խաղալիք։

Հոկտեմբերիկ Լևիկն ել
Եղիկի հետ ե յեկել,
Ու միասին միատեղ
Պատրաստել են նետ, աղեղ։

Կպցրել են մի քարի
Բուրժուային ու ցարին
Նետում նետերը անվերջ
Ուղիղ նրանց աչքի մեջ։





Փոքրիկ Սեդան շիկահեր
Թռչկոտում է վար ու վեր,
Թելերն ուղղում, դրստում
Պարաշյուտ է պատրաստում։

Լայն քայլերով արագ, շուտ
Ձեռքին բռնած պարաշյուտ
Մի տիկնիկի կախ արած
Մեծ կտուրից նետեց ցած։

Ահա ավտոն է գալիս
Ինչու ճամբա չեք տալիս.
Ավտոյի մեջ է նստած
Սպարտակը՝ գլխաբաց։

Տո՜ւ, տո՜ւ տո՜ւ, տո՜ւ։
Ե՜յ, ճամփա տուր մեկնելու,
Զգույշ կացեք, յերեխե՛ք,
Վոր գնացքի տակ չընկնեք։

Գնացքը տա, տա,
Գծերը չիք, չիք
Մեքենավարն է ահա
Կարմրաթուշ մի աղջիկ։

Խաղալիքներ, մրգեր՝ շա՜տ,
Ընկույզ, չամիչ ու փշատ
Տետրակ, մատիտ թուղթ ու ծայր
Ներկեր պես-պես ու պայծառ։

Հետո սայլակ, փոքրիկ կառք,
Փայտե ձիեր առանց սարք
Սայլակի մեջ լցված լիք
Հազար ու մի խաղալիք։





Իսկ Եզնիկը անկյունում,
Խաղարշավն է նկարում,
Նրա կողքին շնիկը
Վեր է ցցել դնչիկը։

Կարոն կանգնել է զգաստ
Ու գոչում է մի՛շտ պատրաստ
— Մեկ, յերկու, մեկ-յերկու,
— Ի՞նչ եք լռել, չեք յերգում։

*
* *

Գնացքը տա, տա,
Գծերը չիք, չիք
Մեքենավարն է ահա
Կարմրաթուշ մի աղջիկ։

Չորս կողմն աղմուկ, աղաղակ
Թախկ, չախկ, թախկ, չախկ,
Յեվ ձիերը նու, հա՜ նո՜ւ
Չեն խանգարում մեկ մեկու։

Առաջինը տեղ հասավ
Նշված տեղից դեռ անցավ
Մեծ մոդելը լավ սարքած
Վրան տիկնիկն եր նստած։

— Դժվար, դժվար է այնքան,
Հասեք շտապ օգնության,
Տեսեք Սոսն է վայր ընկել,
Ավտոն տակն է մնացել։

— Խաղալիքները թողնել
Հիմա պետք է լվացվել։
Ջոփ են անում լվացվում
Ջրի շիթերն են ցայտում։





Ամեն մեկը իր համար
Ունի, սրբիչ ու ոճառ
Փոշին մաքուր ու ճերմակ
Յեվ առանձին խոզանակ։

Հնչեց շչակը ուժգին,
Իմաց տվեց ամենքին,
Բանվորները ժրաջան,
Գործարանից դուրս յեկան։

Ամեն ծնող — հայր ու մայր
Թե մորաքույր, թե յեղբայր
Մանուկներին այն խնդուն
Առան, տարան դեպի տուն։

Ապրեք փոքրիկ բալիկնե՛ր —
Խորհրդային ծաղիկներ,
Ստալինյան մեր դարում
Ձեզ կյա՜նք, արև՛ ու գարուն։





Պատ. խմբագիր՝ Մ. Կորյուն
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գլավլիտի լիազոր՝ Կ. 4682. Հրատ. 4246.
Պատվեր 1261. Տիրաժ 4000.
Թուղթ 62×94. Տպագրական 1. մամ.
Մեկ մամուլում 30720 նիշ. Հեղինակային 3/4 մամ.
Հանձնված է արտադրության 16 նոյեմբերի 1937թ.
Ստորագրված է տպագրության 7 դեկտեմբերի 1937թ.
Գինը 60 կ.

Պետհրատի տպարան, Երեվան. Լենինի փող. 65.

ՀՀ Ազգային գրադարան
NL0409141

26

13024

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.



Виктор Варданян
ПОХОД ИГРУШЕК
Гиз. Арм. ССР Ереван